

Վերապատրաստող կազմակերպություն
ՀՀԿԳՄՍ

<<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց>>
Հերթական ատեստանորման ենթակա
ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴՆԵՐԻ
ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆ**

Հետազոտող ուսուցիչ՝ **Նազելի Կիրակոսյան**

Աշխատանքի ղեկավար՝ **Հասմիկ Բեյբության**

Դպրոց՝ **ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ. Գևորգյանի անվան մ/դ**

Անցկացման վայրը՝ **Վարդենիս**

ՎԱՐԴԵՆԻՍ 2022

Բովանդակություն

1. Ներածություն- էջ 3
2. Գրական ակնարկ – էջ 5
3. Հետազոտվող խմբի նկարագիր – էջ 9
4. Եզրակացություն- էջ 14
5. Գրականության ցանկ- էջ 15
6. Դասապլան 1 –էջ 16
7. Դասապլան 2-էջ 21

ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈՂԸ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆ

Հարցը՝ պատասխանն է:

Ջեյմի Մակենզի

Ներածություն

Ժամանակակից հասարակության պայմաններում կրթությունը սոցիալապես կազմակերպված և որոշակիորեն սահմանված գործընթաց է, որի ընթացքում տեղի է ունենում գիտելիքների և սոցիալական արժեք ունեցող փորձառությանի աստիճանական փոխանցում և անհատի ձևավորում: Վերջին տասնամյակներում Հայաստանում, ինչպես նաև ամբողջ աշխարհում, տեղի ունեցող փոփոխությունները շոշափում են մարդկային և հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտները: Գլոբալացման դարաշրջանի մարդիկ , որոնք դինամիկ կյանք են վարում , առօրյա փորձի ավելի մեծ քանակությամբ որոշումներ են կայացնում: Ավելին, այդ լուծումները՝ ժամանակակից տեխնոլոգիաների հետ կապված, կարող են էապես ազդել նշանակալից քանակությամբ մարդկանց կյանքի վրա, ցավոք սրտի, շատ դեպքերում ոչ դրականորեն: Այդ տեսանկյունից սոցիալական փոփոխությունների ժամանակակից գործընթացներն առաջնային են դարձնում ցանկացած ոլորտում սեփական գործունեության համար պատասխանատվությունն իր վրա վերցնող անձի կերպարի հետ կապված այնպիսի կատեգորիաների վերաիմաստավորում ու վերագնահատում, ինչպիսիք են «իմաստ», «հասկացողություն», «ընտրություն», «որոշում», «ռացիոնալություն» հասկացությունները: Շրջապատող իրականության բազմազան փաստերն ու երևույթները, հասարակության զարգացմամբ պայմանավորված անընդհատ կատարվող փոփոխությունները քննարկելու և ճիշտ մեկնաբանելու ու վերլուծելու համար այսօրվա սովորողը պետք է օժտված լինի բարձր մակարդակի զարգացած ունակություններով, սովորածը հնարավորինս մեծ թվով մասնավոր դեպքերի համար կիրառելու հմտությամբ: Դրա շնորհիվ սովորողները կդառնան ավելի ինքնավստահ և համարձակ, նրանց մոտ կակտիվանա ուսումնական ճանաչողական գործունեությունը, ինչն էլ, իր հերթին, կնպաստի երեխաների մտավոր ունակությունների զարգացմանը, լուրջ աշխատանքի հանդեպ հարգանքի, սիրո և սովորության դաստիարակմանը:

Մույն հետազոտական աշխատանքի նպատակն է՝

բացահայտել ավագ դասարաններում սովորողների վերլուծական հմտությունները:

- ուսումնասիրել սովորողների վերլուծական հմտությունների զարգացման տեխնոլոգիան և փորձարկել այն քիմիայի ուսուցման գործընթացում:

Ձևակերպված նպատակների իրականացման համար սահմանվել է հետևյալ խնդիրները.

- վերլուծել հետազոտության թեմային վերաբերվող համապատասխան հոգեբանական և մանկավարժական գրականություն,

- վերհանել սովորողների վերլուծական մտածողության կարևոր առանձնահատկությունները,

- բացահայտել հարցադրումների մեթոդի արդյունավետությունը դասապրոցեսի տարբեր փուլերում, դրա ազդեցությունը աշակերտների վերլուծական հմտությունների զարգացման վրա,

- շարունակել զարգացնել սովորողների հետաքրքրասիրությունն ինչպես «Քիմիա» առարկայի, այնպես էլ բուն ուսումնառության գործընթացի հանդեպ,

- նպաստել սովորողների ձեռք բերված գիտելիքների կիրառմանը նոր իրավիճակներում,

- ամրապնդել նոր և միջառարկայական կապերը,

- կատարելագործել սովորողների պատճառահետևանքային կապեր գտնելու, հանադրելու, համեմատելու և եզրակացություններ անելու ունակությունը,

- վերլուծել փորձարառական աշխատանքների ընթացքում ձեռք բերված տվյալները:

Գրական ակնարկ

Սովորողի ճանաչողական գործունեության ակտիվացումն առանց ճանաչողական հետաքրքրության զարգացման ոչ միայն դժվար, այլև գործնականում անհնար է: Ահա թե ինչու ուսուցման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար արթնացնել, զարգացնել և ամրապնդել սովորողների ճանաչողական հետաքրքրությունը: Ի՞նչը կարելի է համարել ճանաչողական հետաքրքրություն: Շատ անվանի գիտնականներ այսպես են պատասխանում այս հարցին. «Դա անհատի անձի հատկանիշ դարձած պահանջմունք է, որը դրդում է նրան օբյեկտիվ ձեռքբերումների անհրաժեշտության կարիքը բավարարելու գործունեությանը և բերում է նրան ցանկալի էմոցիոնալ հագեցածություն»: (Плетнева, 2008, стр. 91-92):

Հետաքրքրությունը որպես ուսումնական գործունեության շարժառիթ ուսումնասիրող գիտնականները՝ Լ. Ի. Բոժովիչը, Բ.Ի. Դոդոնովը, Լ. Ս. Սլավինան, հիմնվել են Ս. Լ. Ռուբինշտեյնի աշխատությունների վրա: Ըստ Դոդոնովի, կապված հետաքրքրություններն ու պահանջմունքները դժվար է տարբերել միմյանցից, քանի որ դրանք շատ են ուսումնական գործունեության մեջ և փոխադարձաբար ազդում են միմյանց վրա: (Додонов, 1978):

Սովորողների ոգեշնչումը, մրցակցությունը, խրախուսումը նպաստում են ուսումնական գործունեության մոտիվացիայի ձևավորմանը: Որոշակի պայմաններում դա կարող է արդյունավետ լինել, սակայն դա արտաքին ազդեցություն է: Հարկավոր է օգտագործել դասավանդման այնպիսի մեթոդներ և ուսումնական գործընթացն այնպես կազմակերպել, որպեսզի սովորողներին կողմնորոշել գիտելիքների ձեռքբերման ուղիների, այլ ոչ թե միայն պատրաստի մոտեցումների վրա: (Маркова, 1990): Միայն ներքին մոտիվացիան է հաղորդում ուսուցմանը սեփական գործունեության բնույթ և սովորողի մոտ մեծ հետաքրքրություն առաջացնում ուսման հանդեպ: Զրույցի, դերային խաղերի, ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն ու իրականացումը, գիտահանրամատչելի տեսանյութերի ցուցադրումը, դասագրքերով չսահմանափակվելը, այլ աղբյուրներից սովորեցնելը, ակտուալ հարցերի վրա ուշադրություն դարձնելը, նոր տեխնոլոգիաների կիրառումը, տրամաբանական առաջադրանքների օգտագործումը, պրոբլեմային իրավիճակի ստեղծումը հնարավորություն են տալիս բացահայտել բոլոր սովորողների հետաքրքրությունները և դասավանդումը դարձնել ավելի արդյունավետ (Formwalt 2002):

Սովորողների ուսուցման գործընթացի ակտիվացման, ճանաչողական

հետաքրքրությունների ձևավորման ու զարգացման հարցում մեծ դեր է խաղում մանկավարժական տեխնոլոգիաների շարքում իր ուրույն տեղն ունեցող վերլուծական մտածողության տեխնոլոգիան: Այսօրվա դպրոցականները պետք է ոչ միայն լավ կողմնորոշվեն գիտելիքների հատուկ և գիտական ոլորտներում, այլ նաև կարողանան ձևակերպել և պաշտպանել սեփական գաղափարները և առաջարկները: Ուստի անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել վերլուծել և ընդհանրացնել գիտական փաստերը, երևույթները և տեղեկույթը: Վերլուծական մտածողությունը հասկացվում է որպես մտավոր գործունեության այնպիսի ձև, որը թույլ է տալիս սովորողին գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, վերլուծել այն, տրամաբանական եզրակացություններ անել, ապացույցներ կառուցել, քննադատաբար փաստեր մշակել, ճիշտ ներկայացնել կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Ըստ Ելենա Տուշմինցևայի՝ մակերեսային և խորը մտածողության տարբերություններին հետևելուն և իմաստալից ուսուցման գործընթացը մշտապես ուշադրության կենտրոնում պահելուն առավելագույն չափով նպաստում է լեզուն: Քննարկումներն օգնում են դպրոցից դուրս մտածել, իսկ դպրոցի ներսում՝ սովորեցնում են մտածել (Тушминцева, 2010): Ամենատարածված լեզվական գործիքներից մեկը ուսուցիչների հարցերն են: Հաճախ մոռացվում է իմաստալից ուսուցման այնպիսի կարևոր բաղադրիչ, ինչպիսին սովորողների հարցերն են: Ավանդական կրթական համակարգում սովորողները միայն պատասխանում են հարցերին, բայց չեն հարցնում: Նման պարագայում իրական խնդրահարույց իրավիճակ հազվադեպ է առաջանում: Իմաստալից կրթության մշակույթը պետք է կառուցվի բարդ հարցերի վրա, որոնք իսկապես պրոբլեմային են ուսուցիչների և սովորողների համար: Վերլուծական մտածողության հմտությունների զարգացման համար էական նշանակություն ունի այնպիսի միջավայրի ստեղծումը, որտեղ սովորողները կարող են հարցնել ուսումնական առարկայի մասին, թե՛ ուսուցչին, և թե՛ միմյանց հարցեր ուղղել:

Դասարանային հարցման թեմաներով հողվածները հաճախ սկսում են մեջբերել Սոկրատեսին: Հետազոտողները և հարցման տեխնիկայով հետաքրքրված այլ գրողները հարցադրումները կրթության մեջ հաճախ Սոկրատեսյան են անվանում: Դա ունի խորհրդանշական բնույթ. դասարանային հարցման թեմաներով հողվածների հեղինակները, կարծես, ուզում են հիշեցնել, որ հարցադրումը որպես կրթական ռազմավարություն ունի երկար և արժանավոր պատմություն: Եվ, իսկապես, ենթադրություններին մարտահրավեր նետելու, հակասությունները բացահայտելու և նոր գիտելիքներ ու իմաստություն ձեռք

բերելու նպատակով հարց ու պատասխանի կիրառման Սոկրատեսյան մեթոդը հանդիսանում է աննկարագրելի հզոր ուսուցման մոտեցում: Հետազոտությունները պնդում են, որ հարցադրում, որպես դասավանդման մեթոդ, իր տարածվածությամբ զիջում է միայն դասախոսությանը և որ դասարանում ուսուցիչներն իրենց ուսումնական ժամանակի 35%-ից մինչև 50%-ը ծախսում են հարցադրման ժամեր անցկացնելով (Cotton, 1988): Ի՞նչ է հարցը: Ըստ Քեթլին Քոթթոնի՝ հարց է համարվում ցանկացած նախադասություն, որն ունի հարցական ձև կամ գործառույթ: Դասասենյակի շրջանակներում ուսուցիչների հարցերը սահմանվում են որպես ուսուցողական ակնարկներ կամ խթաններ, որոնք ուսանողներին փոխանցում են բովանդակային տարրեր և ուղղություն տալիս, թե ինչ և ինչպես պետք է անել: Դասարանային հարցումը ներառում է մի շարք նպատակներ.

- առաջացնել հետաքրքրություն և սովորողներին ակտիվորեն ներգրավել դասերին
- գնահատել սովորողների պատրաստվածությունը և ստուգել տնային կամ դասարանային աշխատանքը
- զարգացնել տեղեկանալու մոտեցումներ և վերլուծական մտածողության հմտություններ
- վերանայել և ամփոփել նախորդ դասերը
- դաստիարակել խորաթափանցություն՝ նոր հարաբերությունները բացահայտելու միջոցով
- գնահատել ուսումնական նպատակներին հասնելը
- ուսանողներին խթանել ինքնուրույն ձեռք բերելու գիտելիքներ:

Ջ. Փեթթին նշում է, որ (Петт, 2010)

- հասկանալով սովորեցնելու դեպքում աշակերտները կկարողանան իրենց ըմբռնումները փոխանցել և կիրառել անձանոթ խնդրի պարագայում՝ դա ավելի կարևոր է, քան պարզապես իմանալը
- հարցադրումները սովորեցնում են երեխաներին ինքնուրույն մտածել, այլ ոչ թե ուղղակի լսել ուսուցչին
- թեմայի տրամաբանությունը դառնում է ավելի հստակ
- տրված հարցադրումների շնորհիվ սովորողների նախկինում ստացած

գիտելիքները երբեմն հարցականի տակ են դրվում և շտկվում՝ «սովորածը մոռանալու ձգտումը» ուսումնառության գործընթացի էական մասն է կազմում

- գիտելիքի փոխանցելիության շնորհիվ ուսուցիչը «չի կորցնում» սովորողներին, նա հնարավորություն է ստանում բացահայտելու աշակերտների համար դժվարությունների պատճառ հանդիսացած թյուրըմբռնումը կամ գիտելիքի բացը, օգնելով նրան մոտակա զարգացման գոտուց թևակոխել փաստացի զարգացման գոտի:

Հարցադրման ժամանակ ծավալվող գրույցի ընթացքում աշակերտների անհանգստության մակարդակը զգալիորեն կրճատվում է: Նույնիսկ այն աշակերտների մոտ, որոնց չեն ուղղել հարցը, վստահության զգացում է առաջանում, եթե համոզվում են, որ պատասխանի իրենց տարբերակը ճիշտ է (Леонтьева, 2010): Հետազոտությունները ցույց են տվել, որ հարցերի առաջադրման ուսուցիչների առավել հաճախակի թույլ տված սխալներն են՝ բարդ եզրույթների օգտագործումը, սովորողներին մտածելու քիչ ժամանակ տրամադրելը, ճիշտ պատասխանների ոչ բավարար ամրապնդումը: Հաճախ սովորողների հավելյալ պատասխաններից ձևավորվում է մեկ այլ մարդու կարծիքը: Ճիշտ ժամանակն է ներգրավվելու դժկամությամբ մասնակցող ուսանողներին: Պ. Գրոյսերը կարծում է, որ հարցերը պետք է լինեն պարզ, հակիրճ, ձևակերպված բնական և պարզ լեզվով (Петти, 2010): Ուսանողներն առաջին հերթին պետք է ուսումնասիրեն հիմնական ճանաչողական հմտությունների կիրառումը, որոնք են՝ քննումը, բնութագրումը, նույնացումը, մտաբերումը և նոր, վերջապես, ճանաչողական ավելի բարձր մակարդակի գալարները, դրանք են՝ սինթեզը, գործադրումը, մեկնաբանությունը դասարանային քննարկման միջոցով (“Questioning Techniques for the classroom”):

Ուսումնասիրելով «արդյունավետ փորձի» օրինակները, Դանիելսոնը ստեղծեց չորս բաղադրիչներից կազմված դասադիտարկման գործիք, որը կարևորում է հարցադրումների և քննարկումների ռազմավարությունների կիրառումը: Ռոզենշտայնը (2010, 2012 թթ.) ամփոփել է արդյունավետ ուսուցման առնվազն 40 տարիների հետազոտական փորձը, առանձնացնելով դասադիտարկման ընթացքում որոշարկված ուսուցչական վարքագծի կապը աշակերտների առաջխաղացման հետ. արդյունավետ ուսուցման տասը սկզբունքների ցանկի երրորդ տեղում է մեծ թվով հարցեր տալը և բոլոր սովորողների պատասխանների ստուգումը: Վերլուծական հարցադրումների խթանումը արժեքավոր ուսումնական աջակցություն է Պիանտայի

դասարանային գնահատման միավորային համակարգում (Coe, 2014):

Այսպիսով, դասարաններում հարցադրման մեթոդի կանոնավոր կիրառումը թույլ է տալիս ուսուցիչներին ստեղծել կրթական և զարգացնող միջավայր, որտեղ յուրաքանչյուր սովորող կարող է հեշտությամբ հարմարվել, ակտիվորեն մասնակցել ուսումնառության գործունեությանը և տեսնել իր գիտելիքների առաջընթացի հեռանկարը:

Հետազոտվող խմբի նկարագիրը

Իմ առաջին մանկավարժական հետազոտությունը ես անցկացրեցի յոթերորդ դասարանում քիմիա առարկայից: Դասարանի ընտրությունը պատահական չէր. 7-րդ դասարանում ուսուցչի հանդիպումը խիստ կարևոր է «Քիմիա» ուսումնական առարկայի նկատմամբ անձնային դրական վերաբերմունք ձևավորելու առումով՝ ամբողջ ուսուցումը շրջելով դեպի կյանքը, դեպի այն երևույթները, որոնք շրջապատում են աշակերտին: Խումբը կազմված է տաս սովորողներից:

Հետազոտությունն ինդիքները լուծելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

- վերլուծվել և ընդհանրացվել են հոգեբանա-մանկավարժական և մեթոդական որոշ աշխատություններ,
- իրականացվել են զրույցի, դիտման մեթոդները, թեստավորում
- ուսումնասիրվել են սովորողների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքները,
- կատարվել են հետազոտական դասեր,

Անցկացվել են երկու հետազոտական դասեր, որոնք ընդգրկում են քիմիա դասընթացի նախնական կարևորագույն բաժինները: Աշխատանքի կատարման ընթացքում կիրառվել են սովորողների թե անհատական, թե խմբային գործունեության ձևեր:

Հետազոտական դասերից առաջինը << Քիմիա առարկան, Մարմին և նյութ, նյութերի հատկություններ>> թեման էր: Սովորողներին խթանելու, դրական վերաբերմունք ցուցաբերելու և ներգրավվելու համար դասի սկզբում հարցադրումներով պարզեցի, թե ինչքանով է անհրաժեշտ քիմիա իմանալը, որի իմացությունը կնպաստի ձևավորել գիտելիքներ կենցաղում օգտագործվող նյութերի քիմիական հատկությունների վերաբերյալ նաև դրանց հետ ճիշտ վարվելուն: Հարցերը հստակ համապատասխանեցված էին Բլումի տաքսոնոմիայի «գիտելիք – ըմբռնում – կիրառում – անալիզ – սինթեզ» շղթային: Դա նպաստեց , որ դասն անցնի ազատ երկխոսության մթնոլորտում: Ուրախալի էր , որ աշակերտները բնագիտություն առարկայից ունեին նախնական գիտելիքներ քիմիա առարկայի վերաբերյալ: Անկաշկանդ մթնոլորտն ազդեց, որ սովորողները յուրովի մեկնաբանեն օրենքները / ինչ է նյութը, ինչ է ուսումնասիրում քիմիան, ինչ է ֆիզ. մարմինը/հասկացությունները ամբողջությամբ: Դասապլանում նախատեսված ժամանակը բավարարեց գրավոր առաջադրանքները կատարելու համար: Բաց հարցադրման իսկական ժամանակն էր.

Քննարկվող հարցեր

1. Ի՞նչ է ուսումնասիրում քիմիան:
2. Որո՞նք են քիմիա առարկայի հիմնական խնդիրները:
3. Ի՞նչ է նյութը:
4. Նյութերի հատկությունները:
5. Նյութերի ագրեգատային վիճակները:
6. Նյութերի կիրառման բնագավառները:

Այսպիսով , 5 սովորող բացի օրենքները սահմանելուց նկարագրեցին կենցաղում հաճախ օգտագործվող նյութերը՝ դրանց ագրեգատային վիճակը, գույնը, համր, ջրում լուծվելու ունակությունը, օր.՝ շաքարը, ջուրը, քացախը, կերակրի աղը, կավիճը, խմելու սոդան և այլն: Մնացած 5 աշակերտները կարողացան որոշակի մասնակցություն ունենալ:

Այնուհետև ուսումնական նյութի ուսումնասիրման համար աշակերտներին բաժանվեց աշխատանքային թերթիկներ՝ ցուցադրելով նյութերի նմուշներ:

Տրված է՝

ա/ շաքար, խմելու սոդա, կավիճ

բ/ ջուր,քացախաթթու

Այժմ հարցադրումը՝ Ի՞նչ հատկանիշով են դրանք նման և ի՞նչով են միմյանցից տարբերվում:

Բնութագրեք յուրաքանչյուր նյութն առանձին –առանձին:

Դասի միջնամասում արդեն բավականին ակտիվ էին , քանի որ նախորդ հարցադրումում աշակերտները թվարկել էին կենցաղում օգտագործվող նյութերը,ամբողջ դասարանը ակտիվ սկսեց նկարագրել նյութերը,գրեթե բոլորը կարողանում էին ասել օրինակ ,որ քացախաթթուն անգույն հեղուկ է,սուր հոտով կամ շաքարը սպիտակ,անհոտ բյուրեղ է,քաղցր և այլն:

Աշակերտները մի փոքր դժվարացան նյութերի կիրառման բնագավառները թվարկելիս, հավանաբար նախկինում ձեռք բերած գիտելիքները բավարար չէին հարցադրմանը պատասխանելու համար:

Հետազոտական երկրորդ դասը՝ «Մաքուր նյութեր և խառնուրդներ », որպես նոր դաս: <<Նյութ և ֆիզիկական մարմին>> թեմայի շրջանակներում սովորողների ձեռք բերած գիտելիքների հիման վրա կազմված խմբային առաջադրանքների միջոցով: Որպեսզի ոչ մի սովորող դասի վերջում տրվող հարցադրման քննարկումից դուրս չմնա, սովորողներին մանրագնին խմբավորեցի: Յուրաքանչյուր խմբում քիմիայից առաջադիմություն ցուցաբերող աշակերտի հետ ընդգրկեցի միջինից էլ ցածր գիտելիք ունեցող սովորողի: Դա առավելապես կնպաստի սովորողների քննարկումային հմտությունների զարգացմանը: Բացի այդ, հաշվի առնելով, որ նախորդ դասին որպես վիզուալ գործիք կիրառել եմ միայն պրեզենտացիան, որը տեսողական դաշտից հեռանալուց հետո անմիջապես մոռացվում է, այդ դասի համար նախապատրաստեցի թեմայի հիմնական հասկացությունների, օրենքների հետ առնչություն ունեցող պատկերներով պաստառներ: Չէ որ նկարը այլ կերպ է ձևավորում ընկալումը՝ այն ազդում է վիզուալ մտածողության վրա քայլ առ քայլ, աստիճանաբար լրացնելով համալիր, բարդ հասկացությունները, միավորելով և ընդհանրացնելով տեղեկույթը: Առաջադրանքներն էլ համալրեցի A4 թղթերի վրա արված գծապատկերներով՝ աշխատաթերթիկներում հնարավորինս գրելու պահանջը նվազեցնելու համար:

Ամսաթիվ-----,Անուն,ազգանուն-----

1. Լրացրեք բաց թողած բառերը.

Երկաթը, կերակրի

աղը, ջուրը, շաքարը----- են, այնինչ

թեյնիկը, բաժակը, քանոնը, սեղանը ----- են:

2. Հատկությունն այն բնութագրիչն է, որով նյութերը.

ա/ միայն նմանվում են իրար

բ/ միայն տարբերվում են միմյանցից

գ/ նմանվում են իրար կամ տարբերվում են միմյանցից;

3. Ի՞նչ նյութից է եղյամը.

ա/ ջրից

բ/ օդից

գ/ կերակրի աղից

4. Ընտրեք այն գոյականները, որոնք նյութական առարկաներ չեն բնորոշում

ա/ ուղեղ

բ/ միտք

գ/ քար

դ/ շուն

5. Առարկաները լինում են կենդանի և անկենդան; Ընտրեք կենդանի էակներին.

ա/ մարդ

բ/ ցողի կաթիլ

գ/ քար

դ/ շուն

6. Ստորև թվարկվածներից ընտրեք այն նյութերը, որոնք սենյակային ջերմաստիճանում

հեղուկ վիճակում են.

ա/ քացախաթթու

բ/ շաքար

գ/ օդ

դ/ ջուր

Տեստի արդյունքը բավականին գոհացուցիչ էր, 6 աշակերտ պատասխանել էր ամբողջությամբ, 2 աշակերտ ուներ 2 սխալ պատասխան և 2 աշակերտ 2 սխալ պատասխան:

Կրթության բովանդակության պարտադիր նվազագույնը ապահովելու համար կատարվեց

նաև հետևյալ հարցադրումը՝

Սահմանել մաքուր նյութերը, առաջարկել օրինակներ:

Սահմանել Խառնուրդները, առաջարկել օրինակներ:

Սահմանել համասեռ և անհամասեռ խառնուրդները, առաջարկել օրինակներ:

Պահանջվեց որոշել նյութի պատկանելությունը մաքուր նյութերին կամ խառնուրդներին:

Ապակին, պղինձը, ալյումինը, խաղողաշաքարը մաքուր նյութեր են:

Ամպը ջրի կաթիլների և օդի խառնուրդ է: Օուխը պինդ մասնիկների և օդի խառնուրդ է, իսկ օդը՝ տարբեր գազերի խառնուրդ: Հեղուկ խառնուրդի օրինակ է կաթը՝ յուղի կաթիլների ու ջրի:

Յուրաքանչյուր զույգի համար բաժանվում է պատրաստած քարտերը և թույլատրում փոխադարձ գրույցն ու միմյանց օգնելը: Սկսվում է խմբային աշխատանքը: Ուսուցիչն ուղղորդում է, ղեկավարում, մասնակցում այս կամ այն զույգի բանավեճին: Ստորև ներկայացվում քարտի օրինակ:

/+ / նշանով հաստատել ճիշտ պատասխանը.

Ամսաթիվ-----

Անուն, ազգանուն-----

	Մաքուր նյութ	խառնուրդ	Համոզված չեմ
մառախուղ			
Թորած ջուր			
կաթ			
Գետի ջուր			
բետոն			
շաքար			

Քարտի լրացման արդյունքում 10 աշակերտից 7-ը տվել էր ճիշտ պատասխան, մնացած 3-ը ունեին սխալներ: Վերոհիշյալ սցենարով կառուցված դասը բերեց որոշակի արդյունքների՝ խմբերի բոլոր մասնակիցներն էլ ակտիվ էին: Լրացված գծապատկերների հաջորդականությունը գրատախտակի վրա փակցնելուց հետո յուրաքանչյուր խմբի բոլոր անդամներն էլ առանց դժվարության հնչեցրեցին մաքուր նյութերը և խառնուրդները:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքը ընդգրկեց 2 դասաժամ, որի ընթացքում աստիճանաբար դասարանում ձևավորվեց մոտիվացիա, հետաքրքրասիրություն, արագ մտածելու և աշխատելու ունակություն: Նկատելի առաջընթաց արձանագրեցի առարկայի հանդեպ սովորողների տրամադրվածության, քննարկումային հմտությունների զարգացման և վերլուծական եզրահանգումներ կատարելու մեջ, մեծ սեր առարկայի նկատմամբ: Արդյունքը ինձ համար անսպասելի էր և ուրախալի:

Անցկացված դասերի մանկավարժական և աշակերտական դասանպատակներն այնպես էին որոշված ու ձևակերպված, որ հնարավոր է դառնում դրանց հասնելը և հասնելն ստուգելը: Նպատակը որոշված է, եթե գոյություն ունեն նպատակին հասնելու օբյեկտիվ ստուգումն իրականացնող մատչելի միջոցներ: Նպատակը գործառնակն է, եթե ձևակերպման մեջ նշում կա նպատակին հասնելու միջոցների մասին:

Միայն այն դեպքում, երբ նպատակներն օժտված են նշված երկու հատկությամբ, կարելի է խոսել գործընթացի նախագծման մասին, որը կհանգեցնի այդ նպատակներին հասնելուն: Դասի համար ընտրված նպատակը, եթե ձևական չէ և ուսուցչի կողմից գիտակցված է ընդունված, ամբողջությամբ իրեն է ենթարկում դասի ուղղվածությունը և որոշակի եղանակներ ու միջոցներ թելադրում: Դրսից պարտադրվածի և չընդունվածի դեպքում ուսուցիչն առաջնորդվելու է իր նպատակով՝ մի կողմ դնելով պարտադրվածը: Այս երևույթը մանկավարժական գրականության մեջ արդեն ստացել է իր գնահատականը <<Ուսուցիչը չի կարող մնալ առանց նպատակի, սակայն նրա նպատակները կարող են անորոշ լինել>>:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Плетнева Е.Н. “Познавательный интерес как педагогическое условие управляемой поглощенности учебной деятельностью”, журнал “Современные наукоемкие технологии”, №5 2008г., стр. 91-92
2. Б. И. Додонов “Логико-символическая модель мотивационной структуры деятельности”, журнал “Новые исследования в психологии”, №1 1978г., стр 1, 17-19
3. Маркова А. К. “Мотивация учебной деятельности”, 1990г., стр. 2, 140
4. Lee W. Formwalt «Seven Rules for Effective History Teaching or Bringing Life to the History Class», ОАН Magazine of History, October 2002
5. Тушминцева Е.В. “Формирование навыков мышления высокого уровня как один из компонентов оптимизации обучения английскому языку в высшей школе” //Молодой ученый.-2010.-№3.-с. 301-303 URL: <https://moluch.ru/archive/14/1306/>
6. Дж. Петти “Современное обучение”, стр. 221-222, 232
7. Леонтьева О. В. “Беседа – один из ведущих методов преподавания в классах коррекционноразвивающего обучения в основной школе”, журнал “Современные наукоемкие технологии”. 2010. - №12 – с. 70-72 ' <https://www.top-technologies.ru>view>
8. Ռոբերտ Քոու... «Ի՞նչ ենք հասկանում արդյունավետ ուսուցում ասելիս: Հետազոտության վերծրություն», էջ 15-16):
9. Քիմիայի ուսուցչի ձեռնարկ Զ. Բդոյան,Լ. Սահակյան

Դասապլան 1

Ուսուցիչ՝ Ն. Կիրակոսյան
Դասարան՝ VII

Առարկա՝ Քիմիա
1-ին կիսամյակ

Թեմա՝	«Մարմին և Նյութ, նյութերի հատկությունները »
Օգտագործվող նյութեր՝	Քիմիայի դասագիրք, ընդհանուր տետր, գրատախտակ, գրենական պիտույքներ, , քարտային առաջադրանքներ՝ տարբերակված հարցերով, ֆորմատի թղթեր , Երկաթե մեխ, ապակե բաժակ, կերակրի աղ, շաքար
Հիմնական հասկացություններ	Քիմիա, Նյութ, պինդ մարմիններ, հեղուկ մարմիններ, գազային նյութեր, ֆիզիկական և քիմիական հատկություններ, մարմին
Դասի նպատակը՝	<p>Գիտելիքների համակարգ՝</p> <ul style="list-style-type: none"> • Կրկնել և խորացնել բնագիտություն առարկայից մարմին և նյութ հասկաց-ի մասին ստացած գիտելիքները: • Տարբերել նյութի ֆիզ. և քիմ. Հատկ-ը • Տարբերել կենդանի և անկենդան մարմինները <p>Արժեքային համակարգ՝</p> <ul style="list-style-type: none"> • Չարգացնել միմյանց հետ հաղորդակցվելու և համագործակցելու և հմտությունները, • Խթանել ակտիվ մասնակցությունն առաջադրանքի կատարմանը, • Նպաստել սովորողների ակտիվ մասնակցությանը դասապրոցեսին, ուսումնական երկխոսության մեջ ընդգրկվելուն:

	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա <ul style="list-style-type: none"> • Շրջապատից նյութեր և մարմիններ առանձնացնել, դրանց հատկությունները նկարագրել • Նյութերն ըստ արտաքին տեսքի համեմատել, գլխավոր հատկանիշները դիտարկել: • Նյութի տարբեր ագրեգատային վիճակները բնութագրել: 	
Գործողություններ (Ժամ/տևողություն)		Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)
Կազմակերպչական մաս (2 թույլ)	Կազմակերպչական հարցեր՝ <ul style="list-style-type: none"> - Սովորողների ողջունում - Բացակա աշակերտների անունների գրանցում: 	Նպատակը՝ կազմակերպել աշխատանքը և սովորողներին նախապատրաստել դասին:

<p>Ներածական մաս (15 թույլ)</p>	<p>Ներկայացնում է դասի թեման և նպատակները (պրեզենտացիա): գուգահեռ հարցեր է ուղղում սովորողներին, աշխատելով ներգրավել հնարավորինս շատ աշակերտների: Պատասխանում է նրանց հարցերին: Նախապատրաստում է սովորողներին տարբերակված առաջադրանքներ կատարելու: Հետևում է ինչպես են սովորողները աշխատում, անհրաժեշտության դեպքում օգնում է:</p>	<p>Հարցեր</p> <ul style="list-style-type: none"> • Ի՞նչ է ուսումնասիրում քիմիան • Ի՞նչ է նյութը • 3.Հատկությունն այն բնութագրիչն է,որով նյութերը • 4,Նյութերի ագրեգատային վիճակները: • 5,Նյութերի կիրառման բնագավառները:
---	--	---

<p>Նոր նյութի ուսումնասիրություն (15 րոպե)</p>	<p>Բաժանում է ինքնաստուգման աղյուսակները որպեսզի աշակերտները ստուգեն կատարված առաջադրանքները: Հետևում է, որ սովորողները գրառումներ կատարեն տետրերում:</p>	<p>Հարցադրում.Գրատախտակին գրվում է շաքար,կերակրի աղ,ապակե բաժակ,երկաթե մեխ</p> <ol style="list-style-type: none"> 1. Ի՞նչ գույն ունի 2. Ի՞նչ ազդեգատային վիճակում է 3. Ջերմահաղորդիչ է 4. Նյութ է,թե՞ ֆիզիկական մարմին 5. Որտե՞ղ է կիրառվում
<p>Ամփոփում (10 րոպե)</p>	<p>Համոզվելով, որ կատարել են առաջադրանքը, բարձրաձայն հարցումների միջոցով համեմատում է սովորողների ստացած քայլերի հերթականությունը և առաջարկում է կատարել եզրակացություն: Ամփոփում է եզրակացությունները:</p>	<p>Ո՞ր լուծումն է ավելի իրատեսական:</p>
<p>Գնահատում(3 րոպե)</p>	<p>Այս դասին ձեռք բերված գիտելիքները կստուգվեն հաջորդ դասին</p>	
<p>Տնային հանձնարարություն</p>	<p>Տետրերում երկու սյունակով դուրս գրել ֆիզիկական մարմինների և նյութերի անվանումներ; Գրանցել նաև կենդանի և անկենդան մարմիններ:</p>	

Դասին Անդրադարձ	<p>Դասի սկզբում սովորողները մի քիչ կաշկանդված էին: Սակայն սովորողներին ուղղված առանցքային հարցերի շնորհիվ նրանք աստիճանաբար ակտիվացան, և դասն անցավ ազատ երկխոսության մթնոլորտում: Ուրախակի էր, որ աշակերտները շատ լավ կարողանում էին տարբերել:</p> <p>Տարբերակված առաջադրանքները նրանք կատարեցին դասապլանում նախատեսված ժամանակահատվածում: Յուրաքանչյուր սովորող ինքը ստուգեց իր աշխատանքը՝ ըստ պատասխանների աղյուսակի: 5 աշակերտներ ընդհանրապես սխալներ չունեին, իսկ մնացածը ունեին բացթողումներ:</p> <p>Դասն անցավ բովանդակալից ու հազեցած:</p>
-----------------	--

Դասապլան 2

Ուսուցիչ՝ Ն. Կիրակոսյան
Դասարան՝ VII

Առարկա՝
Ամսաթիվ՝

Քիմիա
1-ին կիսամյակ

Թեմա՝	Մաքուր նյութեր և խառնուրդներ
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, Քիմիական տարրերի պարբերական համակարգ Գրիչ, կավիճ, կերակրի աղ, ջուր, կալիումի պերմանգանատ, շաքար
Հիմնական հասկացություններ	Մաքուր նյութեր, խառնուրդներ, նյութի մաքրում, ճանաչում
Դասի նպատակը՝	Գիտելիքների համակարգ՝ <ul style="list-style-type: none">• ընդհանրացնել սովորողների գիտելիքները մաքուր նյութերի և խառնուրդների վերաբերյալ,• Կատարողանա պատրաստել խառնուրդներ Տարբերակի համասեռ և անհամասեռ խառնուրդները, նրանց մաքրման եղանակները Արժեքային համակարգ՝ զարգացնել վերլուծելու, համեմատելու, ընդհանրացնելու, եզրակաց. անելու ունակությունները,
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա <ul style="list-style-type: none">• Տարբերակել մաքուր նյութերը խառնուրդից• Մաքուր նյութի և խառնուրդի սահմանումը սահմանել• Խառնուրդների մաքրման եղանակների իմացություն

Գործ- ն/տևողությ /		Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ
Կազմակերպ չական մաս 2 ր	Կատարում է աշակերտների հաշվառում և ողջունում:	- Նպատակը՝ սովորողներին նախապատրաստել դասին:
Ներածակա ն մաս (15 րոպե)	Ներկայացնում է դասի թեման և նպատակները: Անցած նյութը վերհիշելու համար տալիս է մի քանի հարցեր՝ աշխատելով ներգրավել հնարավորինս շատ աշակերտներ:	Հարցեր՝ <ul style="list-style-type: none"> • Ո՞ր նյութերն են կոչվում մաքուր և որոնք խառնուրդ • Ո՞ր խառնուրդներն են համասեռ, որոնք անհամասեռ: • Որո՞նք են խառնուրդների մաքրման եղանակները::
Նոր նյութի ուսումնասիր ու	Հարցերի ամփոփումից հետո սովորողներին բաժանում է խմբերի և	
թյուն (15 րոպե)	տրամադրում քարտային առաջադրանք «Մաքուր նյութերի և խառնուրդների վերաբերյալ»; (Խմբային աշխատանքն ավարտելուց հետո ուսուցիչը քննարկում է արդյունքները:	:

	Հետևում է որ տեսրերում կատարվեն լավ պատասխանների շտկումներ;	
Ամփոփում (10 րոպե)	Նոր նյութի յուրացման մակարդակը որոշելու համար ուսուցիչը բաց հարցադրում է ուղում սովորողներին: Բաց հարցադրմանը պատասխաններ ստանալուց հետո կատարում է ամփոփում: Ներկայացնում և բացատրում է տնային աշխատանքը,	
Գնահատում (3 րոպե)	Ձևավորող գնահատում	
Տնային հանձնարար ություն	Տեսրերում գրել մաքուր նյութեր և պատրաստել խառնուրդներ, նաև գրել որոշ խառնուրդների մաքրման եղանակներ:	
Դասին անդրադա րձ	Դասն անցավ շատ հազեցած: Խմբային աշխատանքը լավ ստացվեց, սովորողների ակտիվ մասնակցությունը ոգևորիչ էր: Երկու թույլ սովորողներ ինձ անակնկալի բերեցին իրենց պատասխաններով:: Սովորողները ամփոփեցին և համակարգեցին իրենց գիտելիքները :	

